ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

# ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ

(Մի գլուխ ավարտական շարադրությունից)

Գրիգոր Մագիստրոսը հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի անձնավորություն է ո՛չ միայն որպես քաղաքական գործիչ, այլև՝ գիտության մարդ։ Նրա մատենագրությունից ամենից ավելի արժեքավորը— նրա «Թղթեր»ն են, որոնց մեջ հեղինակը շոշափել է գիտության, գրականության, առասպելաբանության, բժշկության, պատմության, երկրաչափության և աստղաբաշխության հետ կապված գիտական բազմաթիվ հարցեր։ Նա իր «Թղթեր»ի մեջ տալիս է ժամանակի պատմա-հասարակական բազմաթիվ խնդիրների պարզաբանումը, իհարկե, իր տեսակետով։ Նրա «Թղթեր»ը մեր առաջ բաց են անում 11-րդ դարու առաջին կեսի իշխող գաղափարախոսությունը, գիտության ու գրականության զարգացման աստիճանը և ժամանակի հուզող կարևոր հարցերը։

Մագիստրոսի թղթերը տարբեր վերնագրեր ունեն, որոնք դրվել են կա՛մ հեղինակի և կա՛մ հետագա ժամանակներում ընդօրինակող գրիչների կողմից։ Այդ վերնագրերից թե ո՛րն է Մագիստրոսինը և ո՛րը հետսամուտ— դժվար է այժմ ասել։

Մագիստրոսի թղթերով, ինչպես նշել է ակադ. Մ. Աբեղյանը, «մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տեսակ, նամակների ասածը» (Մ. Աբեղյան, Հայ գրականության պատմություն, հատոր երկրորդ, էջ 21)։ Ճիշտ է, մենք Մագիստրոսից առաջ ևս ունեցել ենք զանազան թղթեր, որոնք հավաքված են «Գիրք թղթոց»ի մեջ, սակայն նրանք ավելի շատ պաշտոնական գրագրություններ են, իսկ Մագիստրոսի թղթերը հեղինակի մասնավոր նամակներ են, ուղղված, մեծ մասամբ, իր ժամանակի գիտությամբ զբաղվող մարդկանց։

Իր «Թղթեր»ում Մագիստրոսը բազմիցս շեշտել է, որ ինքը ցանկանում է համառոտ գրել։ Այսպես, Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ուղղված նամակում նա գրում է. «Թէպէտ եւ ըստ գեղեցիկ խնդրոյ կամ լուսափայլութեան, պետականդ բոլոր սրբազանից եւ գլուխ առաքելական, պարտ վարկանիս երկարագոյն նորագոյն բանս իմաստասիրել ծառայի քում, որով զուարճանաս իբր զհայր ի վերայ որդւոյ, սակայն սիրելի է ինձ միշտ կարճառոտ հատանել։ Վասնզի զբոլորն մասն միակի գիծ ուղղակի զբովանդակն պարառէ զուղղանկիւնացն թէպէտ եւ մասն գոլ։ Եւ իմաստնոյն մի բան բաւական է զբիւրս բերել զկնի հետեւաբար» (Կ. Կոստանյանց, Մագիստրոսի Թղթերը, էջ 3)։ Նա այստեղ նշում է, որ իմաստուն անձնավորությունը, նույնիսկ փոքրիկ ակնարկից կհետևցնի խնդրի իմաստը, որով և կիմաստավորի կարճառոտը։

Մագիստրոսը, որպես գիտության մարդ, ծանոթ է եղել իր ժամանակի բոլոր մեծանուն մատենագիրների և հասարակական գործիչների հետ և մեծ հեղինակություն է վայելել նրանց շրջանում։ Իր գրեթե բոլոր նամակները խրատներ և խորհուրդներ են պա-

ղունակում և լուսաբանություններ իրեն դիմած հարցերի։

Մագիստրոսի «Թղթեր»ից երևում է, որ նա լավ ծանոթ էր հայոց, հունաց և հարևան այլ ժողովուրդների պատմության և առասպելաբանություններին։ Այդ տեսակետից հետաքրքիր է հայ ժողովրդի պատմությունից վերցրած այն անձանց անունները, որոնք հիշատակված են նրա նամակներից մեկում. «Ո՞ւր Գեղամայն գեղեցկութիւն, ո՞ւր Հարմայն հոյակապ հիմնարկութիւն, ո՞ւր Արամեան Նահապետն, ո՞ւր Արայն գեղեցիկ Այրարատեան կերտացող... ո՞ւր Երուանդ, որ ի մարտին լինէր անդ, ո՞ւր Տիգրան, որ ըստ Պարթեւին մեծ եւ ծանր. ո՞ւր Բաբ, այսինքն դուռն բարեաց, ո՞ւր Տիրան, որպէս Տիգրան միով պակասեալ գծիւ կրտսեր գոլ նմա. ո՞ւր Վահագն, որ եւ երկնէր երկիր եւ որ զկնի առասպելին առումն... ո՞ւր եւ Վաղարշակ քաջ ի քաջացն Բախլաց, ո՞ւր Արշակ և Արտաշէս, ո՞ւր Տիգրան եւ Արտաւազդ, ո՞ւր Արշամ եւ Աբգար, կամ Սանատրուկ եւ Երուանդ, Արտաշէս եւ միւս Արտաւազդ, Տիրան, Տիգրան, Վաղարշ եւ Խոսրով, ո՞ւր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան եւ Տիգրան, Արշակ, Վարազդատ...» և այլն (Կ. Կոստանյանց, Մոգիստրոսի Թղթերը, էջ 60—61)։

Այստեղ Մագիստրոսը ցանկանում է ցույց տալ այն հակադրությունը, որը գոյություն ունի հայ հին պետականություն ունեցած շրջանի և իր ժամանակաշրջանի միջև և ցավով նշում. «Կեամ խափուցեալ, եւ միայն մորմոքիմ, ոչ տեսանելով զելս իրացն» (Կոստանյանց, Մագիստրոսի Թղթերը, էջ 61) և մաղթում, որ հայ ժողովուրդը կարողանա ապագայում ունենալ իր ազատությունն ու անկախությունը և իր խաղաղ քաղաքականությամբ վարի իր կենաց հարատևությունը՝ «զընդարձակագոյն տեսանել զիշխանութիւն մերոյս նահանգի եւ զիսաղաղական վարել կեանս» (Նույն, էջ 62)։

Մագիստրոսն իր «Թղթեր»ի մեջ մեծ տեղ է տալիս ժողովրդական բանահյուսությանը և նրանք քննադատաբար օգտագործում, ինչպես վարվում է Խորենացին։ Նրա մոտ բերած հին առասպելներից ընտիր նմուշ է Արտաշեսյան առասպելը՝ «Ո՞ տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց եւ զվագելն եղջերուաց. մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց» (Նույն, էջ 87)։ Պարզվում է, որ ժողովուրդն իր հիշողության մեջ պահել էր Արտաշեսյան առասպելը մինչև 11-րդ դարը։

Մագիստրոսը ուշի-ուշով ուսումնասիրել է հունական գրականությունը, նրա առասպելները. «Եթէ ձկնորսաց եմք աշակերտ(ք),— ասում է Մագիստրոսն Իբրահիմ ամիրային,— սակայն ոչ եմք անտեղեակ աթենացւոցն ատրոդութեանց եւ հելլենական հանճարոյ» (Նույն, էջ 174)։ Նրան հայտնի են եղել հունական բոլոր հեթանոսական աստվածները և նրանց հետ կապված ավանդությունները՝ Դիոնեսիոսի, Աթանասի, Աֆրոդիտեի, Պալասի և մյուսների։

Մագիստրոսն իր թղթերի մեջ երբեմն արտահայտում է սուր երգիծանք իր ժամանակի «ապօրինի վարք»ով մարդկանց նկատմամբ։ Այսպես, նա կծու երգիծանքով ծաղրում է Հնձացի Գրիգորին, որը «սակս Աստուծոյ» թողնում է վանքը և լեռ բարձրանում իրեն նվիրելով ճգնավորական կյանքի, մինչդեռ Քրիստոսը,— ասում է Մագիստրոսը,— ժողովրդի մեջ էր մտնում և տարածում իր ուսմունքը։ Այս ծաղրը Մագիստրոսը բերում է մի հատվածով, որ իբր թե գազանները մի նամակ են ուղարկում Գրիգոր Մագիստրոսին և բողոքում, թե հոգևորականները դրախտից փախչելով գնում են անտառ և գազաններին հեռացնում իրենց որջից. «Այլ եկն առ մեզ նամակ,— գրում է Մագիստրոսը,— յանտառէ կեղերջական տրտունջ տոչորեալ սրտի յեղանց, յեղջերուաց եւ ի բոլոր գազանաց, եթէ ելեալք ի դրախտէն, զմեզ ի մերոյն սեփականէ արտաքս հանին, իսկ Դաւթեայ մեզ ի լերինս հրամայեալ կալ. այժմ եւ անտուստ հալածեն» (Կոստանյանց, Մագիստրոսի Թղթերը, էջ 91)։

Ավելի սուր նա ծաղրում է այն մարդկանց, որոնք գիտության մասին ոչինչ չիմանալով, իրենց գիտուն են ձևացնում։ Մագիստրոսը նրանց նմանեցնում է այն ճանճին, որը ցանկանում է առյուծի բերանից հյութ վերցնել նրա քնած ժամանակ, բայց վերջինս արթնանում և մի հարվածով ճզմում է ճանճին ու ոչնչացնում նրան։ «Ճանճի՛կ, ի ճոխ առիւծուց ծամելիս մի՛ մտաներ յորժամ ի քուն մտանէ, եթէ ոչ ճմլիս, ճռաճռպիս, շատ ճենճերաս. ի ծակն, ի փեթակն, ճանճի՛կ, անդ տզզա՛ բզզա՛ եւ յարքունիսն մի՛ երթար»։ Նույնը հաղորդում է նաև հոգևորականներին ասելով. «Արդ ի խո՛ւղն, ի խո՛ւցն, ի խրճի՛թն, անդ սաղմոսէ. նուագել ի ճեմարանսն մի՛ ճեպիք, եթէ ոչ՝ ճանճին պէս ճմլիք» (Կոստանյանց, Մագիստրոսի Թղթերը, էջ 132)։

Մագիստրոսը ոխերիմ թշնամի էր թոնդրակեցիներին, և սպանիչ քննադատության է ենթարկում նրանց։ Նկարագրելով թոնդրակեցիների ուսմունքը, Մագիստրոսը, պետք է ասել, հակառակ իր ցանկության, մեծ ծառայություն է մատուցում պատմությանը, որովհետև նա հաղորդում է այդ աղանդի մասին այնպիսի մանրամասնություններ, որոնք ուրիշ աղբյուրներից մեզ հայտնի չեն։

Հետաքրքիր է նրա ծաղրն ուղղված ժամա-

նակի երաժիշտներից մեկին, որի կապակցությամբ բերում է Պերմինիդայի որդու առակը՝ որն անցնելիս է լինում Թեսաղացվոց Պեղեայի մոտից, նույն րոպեին մի արծիվ իջնելով վերցնում է մանկանը իր մագիլներով և տանում Արգեացվոց աշխարհը։ Այդ տեսնում են մոտիկ ձկնորսները և հարձակվում արծվի վրա, նրա ճանկերից խլում մանկանը, տանում ու հանձնում Արտիմեդիային, խընդրելով նրանից մանուկին կենդանի թողնելու համար։ Վերջինիս համար Արտիմեդիան հրամայում է սովորեցնել իմաստություն և ամենից ավելի երաժշտություն։ Մանուկը հետագայում դառնում է հայտնի երաժիշտ և մեծ անուն հռչակում։

Մագիստրոսը մեծ պատկառանքով է խոսում Անանիա Շիրակացու «Քրոնիկոն»ի մասին, որի գիտական աշխատությունների ժողովածուն ձեռքի տակ է ունեցել։

Մագիստրոսի «Թղթեր»ն ուշի-ուշով քննելուց հետո, հանգում ենք այն եզրակացության, որ հեղինակը նրանց մեջ օգտագործել է առաջադիմական այն ամենը, ինչ որ ստեղծված էր իրենից առաջ։ Նրա «Թղթեր»ը մեզ համար անսպառ շտեմարան է, ուր հավաքված են գիտության, գրականության, պատմության, առասպելաբանության, բժշկության գանձերը։ Դրանք ընթերցելիս մեր առաջ կանգնում են հայկական և հունական գրական կլասիկ ներկայացուցիչները։ Հոմերոսը, Արիստոֆանեսը, Պյութագորասը, Արիստոտելը, Սոկրատեսը, Պղատոնը, Դավիթ Անհաղթը, Շիրակունին և իր ժամանակի անվանի մարդիկ — Մագիստրոսի ամենասիրելի հեղինակներն են, որոնց նա համարում է գիտության գաղտնիքները դրսևորող, գիտության ծարավը հագեցնող և գեղարվեստական գրականությունը ստեղծող մեծ մարդիկ։

Բացի թղթերից, Մագիստրոսը ունի նաև մի քանի բանաստեղծություններ։ Դրանց չափը նա վերցրել է արաբական հեղինակների տաղաչափությունից։—Դա «Հազարտողեան»ն է, որտեղ, գլխավորապես, գործածում է 16 վանկանի չափը։

Բերենք Մագիստրոսից մի փոքրիկ հատված՝ վերցնելով ակադ. Մ. Արեղյանի Գրականության պատմությունից.

«Մեծ են գործք//աստուածային,//ըսքանչելի //նորա բանին,
Հրաշալի՛ //անպատմելին //յամենայնի //զարմանալին,
Այն որ հարին//յերկինս երկնից //ի բարձրութեան//սերովբէին,
Լուսո՛վ//ինքնամատոյց//պարածածկեալ //անքննելին։
Լո՛յս//ինքն առաջին,//լուսոյ բերող, երկրորդ մասին...»։

«Հազարտողեան»ից բացի, Մագիստրոսն ունի այլ չափածոներ, որոնք ավելի պարզ են քան թղթերը։ Այս չափածո նամակները Մագիստրոսն ուղղել է իր որդիներին և աշակերտներին, որոնք ցանկություն են ունեցել տաղաչափական արվեստով զբաղվել։ Այս չափածոների մեջ նա շեշտել է գիտության նշանակության, նրա ուսումնասիրության կարևորության մասին։ Գիտությունն է, որ մարդուն բարձրացնում է իր սկզբնական վիճակից և ավելի բարձր աստիճանի հասցնում։ Ուշադրության արժանի է Մագիստրոսի խորհուրդներն իր որդիներին և աշակերտներին՝ լինել համեստ և փառքի հետևից չընկնել։

Մագիստրոսն իր չափածո ստեղծագործությունները գրելիս, գլխավորապես, ազդվել է Հոմերոսից և Արիստոֆանեսից։ Այդ մասին Մագիստրոսի թոռ՝ Ներսես Շնորհալին հայտնում է, որ Մագիստրոսը ո՛չ միայն օգտվել, այլ և նրա (Հոմերոսի) հանգավորումների չափն է օգտագործել։— Ահա ի՛նչ է գրում Շնորհալին Մագիստրոսի մասին իր վիպասանության մեջ.

«Յորմէ Գրիգոր որդի ծնեալ,
Որ Մագիստրոս վերապատուեալ,
Աստուածային շնորհօք լցեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ,
Հօրըն մերոյ նա հայր եղեալ,
Ըստ մայրականըն միջնորդեալ։
Ի յարքայէն յունաց պատուեալ,
Եւ նահանգաց յոքունց տիրեալ,
Տեսականաւրն ճոխացեալ,
Եւ երկիւղիւրն զարդարեալ։
Ըստ Հոմերայ տաղաչափեալ,
Ըստ Պղատոնի պերճաբանեալ.
Հունականին ներհուն եղեալ,
Եօթն իմաստիցրն մակացեալ։
ԶԱստուածաշունչ տառ վերծանեալ,
Օր ըստ օրէ ի նոյն կըրթեալ,
Եկեղեցիս վայելչացեալ»։

(Ներսէս Շնորհալի, «Բանք չափաւ», էջ 541)։

Այսպիսով, անվիճելի է, որ Գրիգոր Մագիստրոսն իր արժանավոր տեղն ունի և՛ գիտության, և՛ գրականության պատմության մեջ։